ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ,,Ախուրյանի բժշկական կենտրոն,, ՓԲԸ-ն հայտարարում է բաց մրցույթ հետևյալ թափուր աշխատատեղերը զբաղեցնելու համար.

Ջրառատի ԲՄԿ բուժքույր – 1 հաստիք

Արևիկի ԲՄԿ բուժքույր-1 հաստիք

ՀՀ Կառավարության 2011 թ հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջներով բաց մրցույթի մասնակից կարող է լինել ցանկացած անձ, որը կբավարարի ստորև նշված պայմաններին՝

1. Միջին մասնագիտական կրթության առկայություն.
2. Համապատասխան մասնագիտական կատարելագործման առկայություն:
3. Էթիկայի կանոնների իմացություն
4. Համակարգչով աշխատելու ունակություն:

Մրցույթին կարող են մասնակցել գրական հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիներ, ովքեր ունեն կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ, աշխատանքի թույլտվություն և ում կրթական փաստաթղթերը սահմանված կարգով ճանաչվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

Մրցույթը կկայանա 2018թ-ի նոյեմբերի 9-ին, ժամը 12 ^{00}-ին,,Ախուրյանի բժշկական կենտրոն,, ՓԲԸ-ում /հասցեն գ.Ախուրյան, Ախուրյանի խճուղի 14:

Դիմողները ,,Ախուրյանի բժշկական կենտրոն,, ՓԲԸ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում /լրացվում է տեղում/
2. Երկու լուսանկար 3*4 չափի
3. Քաղվածք աշխատանքային գրքույկից / աշխատանքային ստաժ ունենալու դեպքում/
4. Ինքնակենսագրություն
5. Անձնագրի պատճեն ու բնօրինակը
6. Կրթությունը հավաստող դիպլոմի և վերապատրաստման վկայականի բնօրինակներն ու պատճենները.
7. Օտարերկրյա քաղաքացիները՝ ՀՀ կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ

Տեղեկացվում է, որ մրցույթին մասնակցելու համար ներկայացված փաստաթղթերի պատճենները հետ չեն վերադարձվում:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն աշխատանքային օր ժամը 9^{00}-ից մինչև 15 ^{00}-ը:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 02,11.2018թ:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել ,,Ախուրյանի բժշկական կենտրոն,, ՓԲԸ /հասցեն գ.Ախուրյան, Ախուրյանի խճուղի 14, հեռախոս 7-04-10/: